ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԷՄԻԼՅԱ ԱՇՈՏԻ

ՊԱՏԺԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ ԸՍՏ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ

ԺԲ.00.05 – «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան-2020

РОССИЙСКО-АРМЯНСКИЙ УНИВЕРСИТЕТ

АБРААМЯН ЭМИЛЯ АШОТОВНА

ОБЩИЕ НАЧАЛА НАЗНАЧЕНИЯ НАКАЗАНИЯ В КОНТЕКСТЕ РЕАЛИЗАЦИИ ПРИНЦИПА СПРАВЕДЛИВОСТИ ПО УГОЛОВНОМУ ЗАКОНОДАТЕЛЬСТВУ РА

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.05 – «Уголовное право и криминология; уголовно-исполнительное право»

Ереван-2020

Ատենախոսության թեման հաստատվել է Հայ-Ռուսական համալսարանում

Գիտական ղեկավար՝ **իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լ.Զ. Թադևոսյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ **իրավաբանական գիտությունների դոկտոր Ա.Ա. Թամազյան**

իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Ն.Յու. Զոհրաբյան

Առաջատար կազմակերպություն՝ **Երևանի պետական համալսարան**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2020 թվականի հոկտեմբերի 8-ին՝ ժամը 16^{30}-ին, Հայ-Ռուսական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի Իրավագիտության 063 մասնագիտական խորհրդի նիստում (0051, ք. Երևան, Հովսեփ Էմինի 123):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայ-Ռուսական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքված է 2020 թվականի օգոստոսի 24-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
իրավաբանական գիտությունների թեկնածու **Զ.Հ. Հայրապետյան**

Тема диссертации утверждена в Российско-Армянском университете

Научный руководитель: **доктор юридических наук, профессор Л.З. Тадевосян**

Официальные оппоненты: **доктор юридических наук А.А. Тамазян**

кандидат юридических наук, доцент Н.Ю. Зограбян

Ведущая организация: **Ереванский государственный университет**

Защита состоится 8-ого октября 2020 года в 16^{30} часов на заседании специализированного совета 063 по Юриспруденции ВАК РА при Российско-Армянском университете (0051, г. Ереван, ул. Овсепа Эмина, 123).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки Российско-Армянского университета.

Автореферат разослан 24-ого августа 2020 года.

Ученый секретарь специализированного совета,
кандидат юридических наук **Дж.А. Айрапетян**

Ատենախոսության ընդհանուր բնութագիրը

Ատենախոսության թեմայի արդիականությունը. Հանցավորության աճը, դրա բացասական միտումները հարկադրում են հասարակությանը և պետությանը համապատասխան հակազդեցություն կիրառել: Անվիճելի է, որ հանցագործությունների ժամանակին բացահայտումը, հանցանք կատարած անձանց հայտնաբերումը, նրանց պատասխանատվության ենթարկելը, արդարացի պատիժ նշանակելն ու կիրառելը կարող են էական կանխիչ նշանակություն ունենալ: Պատիժը որպես պետության կողմից և անունից կիրառվող հարկադրանքի միջոց՝ ուղղված է պաշտպանելու անձի, հասարակության և պետության շահերը հանցավոր երևույթներից, ինչպես նաև ապահովելու անձանց՝ օրենքին համապատասխանող վարքագիծը: Միևնույն ժամանակ, օրինական, հիմնավորված և արդարացի պատիժը նաև իրավակարգի ամրապնդման կարևոր միջոց է:

Պատիժը քրեական իրավունքի գիտության առանցքային և կարևորագույն ինստիտուտներից է, որի տեսական և գործնական հարցերը դեռևս վաղ ժամանակներից ուսումնասիրվել են բազմաթիվ իրավաբան-գիտնականների, ինչպես նաև փիլիսոփաների կողմից: Եվ չնայած պատիժը, որպես քրեական իրավունքի հիմնարար ինստիտուտ, մշտապես գտնվել է նրանց ուշադրության կենտրոնում, այնուամենայնիվ, առավել քան արդիական է պատժի՝ որպես պետության քրեական քաղաքականության կարևորագույն տարրի բազմակողմանի և համապարփակ ուսումնասիրությունը: Պատիժը և դրա նշանակման ընդհանուր սկզբունքները գենետիկորեն կապված են գոյություն ունեցող հասարակական հարաբերությունների զարգացման ընթացքի հետ, ուստի նման պայմաններում պատժի և դրա նշանակման ընդհանուր սկզբունքների՝ որպես կենդանի օրգանիզմի համապատասխանեցումն արդի մարտահրավերներին և պահանջներին օրակարգային խնդիր է:

Վերոնշյալի մասին է վկայում այն հանգամանքը, որ դատարանները, յուրաքանչյուր քրեական գործով պատիժ նշանակելիս, պարտավոր են ղեկավարվել պատժի նշանակման ընդհանուր սկզբունքներով, այսինքն՝ այնպիսի հիմնադրույթներով, որոնք թույլ են տալիս հանցանք կատարած անձանց նկատմամբ նշանակել արդարացի պատիժ: Դատարանի կողմից արդարացի պատիժ նշանակելը քրեական գործով արդարադատության իրականացման վճռական պահն է, որը պետք է դառնա կատարված հանցագործության հասարակական վտանգավորության գնահատման լիարժեք չափանիշը, պատժի ենթարկվող անձին ուղղելու ամենակարճ ճանապարհը, ինչպես ամբաստանյալի, այնպես էլ հասարակության այլ անդամների կողմից նոր հանցագործությունները կանխելու գործուն միջոց: Նշված հանգամանքներն ավելի են կարևորում և արժևորում պատիժ նշանակելու գործընթացը, քանի որ այդ փուլում առավել թափանցիկ տեսանելի է դառնում արդարադատության իրականացումը, և դրա վերաբերյալ ձևավորում որոշակի պատկերացում հասարակության շրջանում: Հետևաբար, դատարանները պետք է պատշաճ ջանասիրություն և ուշադրություն ցուցաբերեն՝ հատկապես ապահովելով արդարության սկզբունքի հետևողական կենսագործումը:

Սույն աշխատանքում պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքները ուսումնասիրվել է արդարության սկզբունքի իրագործման համատեքստում՝ ուստի ներկայացվել է նաև այդ սկզբունքի անառարկելի կարևորությունը, էությունն ու նշանակությունը: Արդարության սկզբունքի հիմնախնդիրը մշտապես գտնվել է բազմաթիվ իրավագետների, մտավորականների և փիլիսոփաների ուշադրության կենտրոնում: Չնայած հետազոտությունների հարուստ պատմությանը, արդարության սկզբունքի հիմնախնդիրը պահանջում է շարունակական ուսումնասիրություն, քանի որ դրա նկատմամբ վերաբերմունքը փոխվում է մինչ օրս՝ պայմանավորված ժամանակի մարտահրավերներով և հասարակական հարաբերությունների զարգացման ընթացքով:

Արդարության սկզբունքի իրավական ամրագրումն արտացոլվել է ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային իրավական ակտերում: Այն ունեցել է գիտական մեծ գրավչություն՝ գիտական ամենատարբեր դպրոցների և ուղղությունների ներկայացուցիչների համար: Արդարության սկզբունքը, իբրև անձի իրավական պաշտպանվածության ցուցանիշ, հիմնվում է դրա սահմանադրական ամրագրման ու երաշխիքի՝ իբրև իրավական պետության տարրի վրա: Բացի այդ, Միավորված ազգերի կազմակերպության (այսուհետ՝ նաև ՄԱԿ) Կանոնադրությունը ճանաչում է արդարությունը որպես համաշխարհային իրավակարգի հիմք: Արդարության անանցելի նշանակությունն ընդգծվում է նաև 1948 թվականի դեկտեմբերի 10-ի՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում, 1945 թվականի մայիսի 5-ի՝ Եվրախորհրդի կանոնադրության մեջ, 1950 թվականի նոյեմբերի 4-ի՝ «Մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայում, «Հանցավորության ու արդարադատության մասին» Վիեննայի հռչակագրում, 2000 թվականի ապրիլի 15-ին տասներորդ Կոնգրեսի կողմից XXI դարի մարտահրավերների պատասխաններում ու բազմաթիվ այլ միջազգային փաստաթղթերում: Բացի այդ, արդարության կատեգորիան, ավելի գործնական, կոնկրետ ու ընդարձակ մեկնաբանման է արժանացել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի բազմաթիվ վճիռներում: Այս ամենն անկասկած, խոսում է արդարության սկզբունքի հիմնախնդրի արդիականության մասին:

Ամփոփելով նշենք, որ հասարակության զարգացման ներկա փուլում, քրեական պատիժը հանդիսանում է այն անհրաժեշտ և միևնույն ժամանակ արդյունավետ միջոցը, որով պետությունն արձագանքում է կատարված հանցագործությանը: Այդ իսկ պատճառով, պատժի ինստիտուտը, ինչպես նաև դրա նշանակման սկզբունքները, մշտապես կարիք ունեն մանրակրկիտ կանոնակարգման, ինչպես նաև գիտական հիմնավորման, որպեսզի քրեաիրավական ներգործության միջոցները կիրառվեն միայն այն սահմաններում, որոնք անհրաժեշտ և բավարար են պատժի առջև դրված խնդիրների ու նպատակների իրագործմանը հասնելու համար:

Հետազոտության թեմայի մշակվածության աստիճանը. Պատժի նշանակման ընդհանուր սկզբունքների հիմնախնդիրների ուսումնասիրությունը մշտապես գտնվել է իրավաբան-գիտնականների ուշադրության կենտրոնում: Նշված հիմնախնդիրն իրենց աշխատություններում հետազոտության են ենթարկել Ս.Ս.Ավետիսյանը,

Ա.Հ.Գաբուզյանը, Զ.Ա.Թադևոսյանը, Լ.Զ.Թադևոսյանը, Հ.Մ.Խաչիկյանը, Մ.Ի.Ուզունյանը, Ն.Ա.Բելյաևը, Ա.Ս.Գորելիկը, Մ.Յու.Դվորեցկին, Ն.Ն.Դուդարը, Լ.Կ.Կաիրբաևան, Լ.Լ.Կրուգլիկովը, Ն.Ս.Մալեինը, Ա.Ի.Մարցևը, Վ.Վ.Յուդինը, Ի.Գ.Նաբիևը, Ա.Վ.Նաումովը, Ա.Ն.Պոպովը, Ա.Ի.Ռառոգը, Ս.Ն.Սաբանինը, Ն.Ս.Տագանցևը և այլոք:

Բարձր գնահատելով հիշյալ գիտնականների արժեքավոր հետազոտությունները, որոնք մեծ ներդրում են ունեցել քրեական իրավունքի գիտության զարգացման ոլորտում՝ հարկ է փաստել, որ վերը նշված ոլորտում շատ հիմնախնդիրներ դեռևս լրացուցիչ լուսաբանման ու հետազոտման կարիք ունեն: Դրա համար անհրաժեշտություն է առաջանում իրականացնելու պատժի նշանակման ընդհանուր սկզբունքների հիմնախնդրի համապարփակ և համալիր հետազոտություն, ինչը թույլ կտա բացահայտելու այս ոլորտում առկա օրենսդրական բացերը: Հարկ է նկատել նաև, որ հայրենական քրեական իրավունքում մինչ օրս բացակայում է արդարության սկզբունքի իրագործման համատեքստում պատժի նշանակման ընդհանուր սկզբունքների հիմնախնդրի վերաբերյալ համընդգրկուն աշխատություն:

Հետազոտության օբյեկտը. Հետազոտության օբյեկտն արդարության սկզբունքի իրագործման համատեքստում պատիժ նշանակելու առնչությամբ ծագող հասարակական հարաբերություններն են:

Հետազոտության առարկան. Հետազոտության առարկան արդարացի պատիժ նշանակելու հիմնախնդիրները կանոնակարգող՝ Հայաստանի Հանրապետության և մի շարք օտարերկրյա պետությունների քրեական օրենսդրության նորմերն են, ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծի (այսուհետ՝ նաև Նախագիծ) իրավակարգավորումները և դատական պրակտիկան:

Հետազոտության նպատակը և խնդիրները. Հետազոտության նպատակն է արդարության սկզբունքի իրագործման համատեքստում պատիժ նշանակելու հիմնախնդրի համակարգային ուսումնասիրությունն ու վերլուծությունը, քանակական և որակական վերլուծության միջոցով Հայաստանի Հանրապետությունում դատարանների կողմից իրականացվող պատժի քաղաքականության հիմնական օրինաչափությունների և պատիժների նշանակման օրենսդրական կարգավորման հիմնախնդիրների վեր հանումը, Հայաստանի Հանրապետության և այլ պետությունների պատժի նշանակման ինստիտուտների միջև համեմատական վերլուծության իրականացումը, ինչպես նաև կատարված համալիր հետազոտության արդյունքների հիման վրա օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի կատարելագործմանն ուղղված առաջարկությունների մշակումը: Վերոնշյալ նպատակին հասնելու համար մեր կողմից առաջ են քաշվել հետևյալ խնդիրները.

- վերլուծության ենթարկել «արդարություն» հասկացությունը՝ բացահայտելով արդարության բարոյաիրավական հիմքը,
- բացահայտել արդարության՝ որպես իրավունքի հիմնարար սկզբունքի էությունն ու բովանդակությունը,
- հստակեցնել արդարության սկզբունքի դերն ու նշանակությունը՝ պատժի նշանակման ընդհանուր սկզբունքների համատեքստում,
- վերլուծել օրենսդրությամբ նախատեսված արդարացի պատժի նշանակման

ընդհանուր սկզբունքային պահանջները, այն է՝ պատիժ նշանակելիս կատարված հանցագործության հանրային վտանգավորության բնույթի և աստիճանի, հանցավորի անձը բնութագրող տվյալների, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքների գնահատումը,

- ուսումնասիրել և վեր հանել արդարացի պատժի նշանակումը կարգավորող նորմերի գործնական կիրառության ընթացքում առաջացող խնդիրները՝ տեսական գրականության և ձևավորված դատական պրակտիկայի ուսումնասիրության միջոցով,
- ուսումնասիրել օտարերկրյա պետությունների քրեական օրենսդրություններով նախատեսված՝ արդարացի պատիժ նշանակելու իրավական կարգավորումները,
- համեմատահիրավական վերլուծության ենթարկել պատժի նշանակման վերաբերյալ գործող օրենսդրության և Նախագծի նորմերը, ներկայացնել առաջարկություններ՝ Նախագիծն առավել կատարելագործելու նկատառումներով և ակնկալիքով,
- կատարված հետազոտությունների արդյունքների հիման վրա մշակել և ներկայացնել համապատասխան օրենսդրական առաջարկություններ:

Հետազոտության տեսական հիմքը. Հետազոտության տեսական հիմքն են կազմել հայրենական և արտասահմանյան աղբյուրները, մասնավորապես՝ քննարկվող հիմնախնդրի շուրջ գիտական հետազոտություններ ու ուսումնասիրություններ իրականացրած մի շարք իրավաբան-գիտնականների՝ իրավունքի ընդհանուր տեսության, քրեական իրավունքի և դատավարության, միջազգային իրավունքի, փիլիսոփայության բնագավառների աշխատությունները:

Հետազոտության իրավական և փորձառական հիմքը. Հետազոտության իրավական և փորձառական հիմքն են կազմել ՀՀ սահմանադրությունը, ՀՀ քրեական օրենսգիրքը, ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը, արտասահմանյան երկրների քրեական օրենսդրությունները, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիան, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագիրը, «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ» կոնվենցիան, Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ CM/Rec (2008) 11 հանձնարարականը, Անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելու վերաբերյալ ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոնները («Պեկինյան կանոններ»), Ազատազրկման հետ չկապված միջոցների վերաբերյալ ՄԱԿ-ի նվազագույն կանոնները («Տոկիոյի կանոններ»), Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի թիվ 6 կարծիքը, ինչպես նաև պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքային պահանջների վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից կայացված նախադեպային որոշումներն ու ՀՀ դատարանների կողմից նշանակված պատիժների վերաբերյալ վիճակագրական տվյալները:

Հետազոտության մեթոդաբանական հիմքը. Հետազոտության

մեթոդաբանական հիմքն են կազմել համընդհանուր՝ դիալեկտիկական և պատմական, համատեսական՝ անալիզի և սինթեզի, մասնագիտական՝ համակարգակառուցվածքային և համեմատական-իրավական, ինչպես նաև վիճակագրական ու վերլուծական մեթոդները:

Հետազոտության գիտական նորույթը. Առաջին անգամ Հայաստանի Հանրապետությունում ատենախոսության մակարդակով փորձ է արվել համալիր և բազմակողմանի հետազոտել ու վերլուծել արդարության սկզբունքի իրագործման համատեքստում պատժի նշանակման ընդհանուր սկզբունքների կիրառման տեսական և գործնական հիմնախնդիրները:

Նշված վերլուծությունը կատարվել է հիմնվելով ՀՀ քրեական օրենսգրքի և Նախագծի, առանձին օտարերկրյա պետությունների քրեական օրենսդրությունների, տեսական աղբյուրների, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների, ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային բնույթի որոշումների, ինչպես նաև վերաբերելի միջազգային փաստաթղթերի համակարգային ուսումնասիրության վրա: Ուսումնասիրելով և վեր հանելով պատժի նշանակման գործընթացը կարգավորող նորմերի գործնական կիրառության ընթացքում առաջացող խնդիրները՝ արդյունքում ներկայացվել են նշված կապակցությամբ տեսական եզրահանգումներ և օրենսդրական առաջարկություններ: Ատենախոսության գիտական նորույթը դրսևորվում է նաև պաշտպանության ներկայացվող դրույթներում:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները.

1. Լեզվաբանական, պատմա-փիլիսոփայական վերլուծությունը ցույց է տալիս, որ հասարակության մեջ գերիշխող աշխարհայացքի ազդեցության ներքո ձևավորված արդարության մասին պատկերացումները ձեռք են բերում օբյեկտիվ բնույթ, որի համատեքստում արդարությունը, հանդիսանալով բարդ ու բազմաբովանդակ երևույթ և հիմնված լինելով ոչ միայն իրավական, այլ նաև սոցիալական ու բարոյական տարրերի վրա, հանդես է գալիս որպես օբյեկտիվ երևույթ, որի հաշվառումը հնարավոր է և անհրաժեշտ՝ ինչպես քրեաիրավական նորմերը կառուցելիս, այնպես էլ դրանք կիրառելիս, հատկապես երբ այն վերաբերում է պատժի ինստիտուտի կիրառմանը:

2. Արդարությունը՝ որպես քրեական իրավունքի հիմնարար սկզբունք, կարելի է դիտարկել երկու հիմնական տեսանկյունից.

ա) արդարություն հասարակության նկատմամբ, որի էությունը տուժողի, հասարակության և պետության շահերի պաշտպանությունն է,

բ) արդարություն հանցանք կատարած անձի նկատմամբ, որի էությունը հանցանք կատարած անձին նախևառաջ որպես անհատ դիտարկելն է՝ ապահովելով պատժի անհատականացումը, հանցանքի բնույթին, ծանրությանը, այն կատարելու հանգամանքներին և հանցավորի անձին համապատասխան պատժի նշանակումը, ինչպես մարմնական պատիժների, այնպես էլ ֆիզիկական ու բարոյական տառապանքների բացառումը, ինչպես նաև հարգանքը հանցանք կատարած անձի արժանապատվության հանդեպ:

3. Անհրաժեշտ է փաստել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի իրավակարգավորումը, համաձայն որի, հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պատիժը և քրեաիրավական ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարացի՝ համապատասխանեն հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ և բավարար լինեն նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար, ամբողջական չի արտացոլում արդարության սկզբունքի ողջ էությունն ու բովանդակությունը, քանի որ ուղղված է առավելապես պատժի անհատականացման խնդիրների կարգավորմանը: Այս առումով առավել նպատակահարմար է ընդլայնել քննարկվող սկզբունքի սահմանները նաև ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասում՝ այն շարադրելով հետևյալ խմբագրությամբ.

«1. Քրեական օրենսդրությունը հիմնվում է արդարության սկզբունքի վրա, այսինքն պետք է համապատասխանի անձի, հասարակության և պետության քրեաիրավական պաշտպանության հաստատման, արարքի պատժելիության սահմանման, ինչպես նաև դրա անհատականացման չափանիշների օբյեկտիվ պահանջմունքներին, անհրաժեշտ և բավարար լինի պատժի նպատակների իրագործումն ապահովելու տեսանկյունից: Հանցանք կատարած անձի նկատմամբ նշանակվող պատիժը և քրեաիրավական ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարացի»:

4. Պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներից յուրաքանչյուրն ուղղված է համահարթեցնող կամ բաշխիչ արդարության իրականացմանը: Այս համատեքստում համահարթեցնող արդարությունն առկա է օրինական չափանիշներ սահմանելու միջոցով դատարանի հայեցողությունը սահմանափակելիս, որոնք հնարավորություն են տալիս կայացնել բացարձակ որոշակի որոշում՝ պատժի չափի վերաբերյալ, իսկ բաշխիչ արդարությունը, ընդհակառակը՝ առկա է դատարանի կողմից այդ հարցում հայեցողություն դրսևորելու հնարավորություն ընձեռելիս:

Համահարթեցնող արդարության իրականացմանն են ուղղված ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի 1-ին մասի հետևյալ դրույթները. 1) հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակվում է արդարացի պատիժ, որը որոշվում է սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սահմաններում՝ հաշվի առնելով քրեական օրենսգրքի Ընդհանուր մասի դրույթները, 2) հանցագործության՝ հանրության համար վտանգավորության բնույթով և աստիճանով: Իսկ բաշխիչ արդարությունն իրագործում են պատիժ նշանակելու հետևյալ ընդհանուր սկզբունքները. ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթն այն մասին, որ պատժի տեսակը և չափը որոշվում են հանցավորի անձը բնութագրող տվյալներով, այդ թվում՝ պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքերով, ինչպես նաև ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթն այն մասին, որ հանցագործության համար նախատեսված պատիժներից առավել խիստը նշանակվում է, եթե նվազ խիստ տեսակը չի կարող ապահովել պատժի նպատակները:

5. Պատիժ նշանակելիս խիստ անհատական մոտեցում ապահովելու նպատակով դատարանները պարտավոր են բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվորեն հետազոտել

ամբաստանյալի անձը բնութագրող տվյալները: Միաժամանակ, անհրաժեշտ է հստակեցնել և օրենսդրորեն ամրագրել դատարանի կողմից պատիժ նշանակելիս գնահատման ենթակա՝ անձը բնութագրող հանգամանքների հստակ ցանկը:

Դատարանի կողմից նշանակվող պատժի արդարացիության հիմնական պահանջներից է նաև այն, որ պատիժը պետք է համապատասխանի հանցագործության վտանգավորության աստիճանին և բնույթին: Ուստի, առանցքային խնդիր է այն, որ դատարանի կողմից պատիժ նշանակելիս պատշաճ իրավական գնահատման ենթարկվեն խախտված հասարակական հարաբերությունների բնույթն ու կատարված հանցանքի հանրային վտանգավորության աստիճանը:

Պատիժ նշանակելիս և հանցագործության հանրային վտանգավորության աստիճանը որոշելիս դատարանները պետք է ելնեն այն բոլոր հանգամանքների համակցությունից, որոնցում կատարվել է կոնկրետ հանցավոր արարքը, մեղքի ձևից, հանցագործության կատարման շարժառիթներից, եղանակից, իրադրությունից, հանցավոր մտադրության իրագործման աստիճանից, խախտված հասարակական հարաբերությունների բնույթից, առաջացած վնասի չափից:

Պատասխանատվության անհատականացման համար կարևոր նշանակություն ունի նաև հանցագործության փուլերի սահմանազատումը. որքան հանցավորը մոտենում է իր դիտավորության իրականացմանը, այնքան ավելի մեծ վնաս է հասցնում քրեական օրենքով պաշտպանվող շահերին և իրենից առավել մեծ վտանգավորություն է ներկայացնում:

6. Դատարանի կողմից պատիժ նշանակելիս արդարությունը՝ որպես քրեական իրավունքի հիմնարար սկզբունք, դրսևորվում է ոչ միայն հանցանք կատարած անձի նկատմամբ, այլ նաև հասարակության նկատմամբ, որի էությունը տուժողի, հասարակության և պետության շահերի պաշտպանությունն է: Սոցիալական արդարության վերականգնման պահանջի հասցեատերն ինչպես պետությունն է, այնպես էլ տուժողը, ով սոցիալական արդարության վերականգնման հարցում առավել շահագրգիռ կողմ է հանդիսանում և իրավասու է պահանջել ու ակնկալել այդ նպատակի երաշխավորումն ու իրագործումը: Հետևաբար, արդարության՝ որպես պատիժ նշանակելու սկզբունքի բովանդակությունն ընդգրկում է նաև տուժողի վերաբերմունքն ու դիրքորոշումը նշանակված պատժի նկատմամբ:

7. Անհրաժեշտ է հստակ տարանջատել պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և անձը բնութագրող հանգամանքները, քանի որ գործնականում հաճախ են հանդիպում իրավիճակներ, երբ դատարաններն այդպիսիք նույնացնում են. մասնավորապես, միևնույն հանգամանքը տարբեր դատարանների կողմից գնահատվում է միաժամանակ և՛ որպես պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանք, և՛ որպես ամբաստանյալի անձը բնութագրող տվյալ: Այսպես, անձի երիտասարդ, ամուսնացած լինելը, դրական բնութագրերի առկայությունը, հանցագործության մեջ մեղավոր ճանաչելը, կատարածի համար զղջալը, նախկինում դատապարտված չլինելը որոշ դեպքերում դիտարկվում են որպես անձը բնութագրող հատկանիշներ, մեկ այլ դեպքում՝ որպես պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքներ:

Կարծում ենք, որ գործնականում նման մեկնաբանման պատճառը օրենսդրական ոչ հստակ ձևակերպումն է, համաձայն որի՝ «*Պատժի տեսակը և չափը որոշվում են (...) հանցավորի անձը բնութագրող տվյալներով, այդ թվում՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներով*» (ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի 2-րդ մաս), ինչն էլ հիմք է տալիս նույնացնելու հիշյալ հասկացությունները:

Հաշվի առնելով ինչպես սույն կետում, այնպես էլ պաշտպանության ներկայացվող 5-րդ և 6-րդ դրույթներում արտահայտված դիրքորոշումները, առաջարկում ենք ՀՀ քրեական օրենսգրքի «Պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքները» վերտառությամբ 61-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«2. Պատժի տեսակը և չափը որոշելիս դատարանը պետք է ելնի.

1) անձը բնութագրող տվյալներից (որպես անձը բնութագրող տվյալներ գնահատվում են՝ անձի կենսաբանական, սոցիալ-հոգեբանական, սոցիալ-ժողովրդագրական հատկությունները՝ վարքագիծն ընտանիքում և կենցաղում, աշխատանքի հանդեպ ունեցած վերաբերմունքը, կրթությունը, առողջական վիճակը, տարիքը, ծառայությունը պետության և հասարակության առջև, ինչպես նաև նրա կենսակերպը մինչև հանցագործության կատարումը և վարքագիծը՝ այն կատարելուց հետո),

2) խախտված հասարակական հարաբերությունների բնույթից և կարևորությունից,

3) հանցագործությամբ պատճառված վնասի բնույթից և չափից,

4) հանցագործության եղանակից, տեղից, ժամանակից,

5) հանցագործության շարժառիթներից և նպատակներից,

6) դիտավորության կամ անզգուշության տեսակից,

7) հանցավոր մտադրության իրականացման աստիճանից,

8) պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքներից,

9) տուժողի դիրքորոշումից,

10) հանցավորի վերասոցիալականացման և իրավահպատակ վարքագծի ձևավորման գործընթացի ու նրա ընտանիքի կենսապայմանների վրա նշանակվող պատժի հնարավոր ազդեցությունից»:

8. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դատական պրակտիկայում առկա են բազմաթիվ իրավիճակներ, երբ ամբաստանյալի մեծահասակ լինելու փաստը, անձը դրական բնութագրող այլ հանգամանքների հետ միասին էականորեն նվազեցնում է հանցավորի անձի և նրա կատարած արարքի հանրային վտանգավորության բնույթն ու աստիճանը, և հիմք հանդիսանում դատարանի կողմից մեղմ պատիժ նշանակելու համար, ինչպես նաև ուսումնասիրելով միջազգային լավագույն փորձը՝ առաջարկվում է որպես պատիժը մեղմացնող նոր հանգամանք նախատեսել հանցանք կատարելու կամ պատիժ նշանակելու պահին հանցավորի վաթսունհինգ տարին լրացած լինելը, ինչն օրենսդրորեն նախատեսվել է նաև որպես ծերության կենսաթոշակային տարիք: Նշված տարիքը համապատասխանում է նաև

Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից սահմանված ծերության տարիքի չափանիշներին:

9. Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ անձը բացասականորեն բնութագրող այն հանգամանքները, որոնք նախատեսված չեն ՀՀ քրեական օրենսգրքի 63-րդ հոդվածով, չեն կարող դիտվել որպես պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք, սակայն դրանք որպես անձը բնութագրող տվյալներ դատարանի կողմից պետք է հաշվի առնվեն հանցանք կատարած անձի նկատմամբ պատժատեսակն ու պատժաչափը որոշելիս:

10. Դատարանների կողմից անարդարացի պատիժ նշանակելուն նպաստող օբյեկտիվ գործոններից է նաև այն, որ ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասի բազմաթիվ հոդվածների սանկցիաները ձևավորելիս օրենդիրը համակարգային հստակ մոտեցում չի ցուցաբերել: Մասնավորապես, մի շարք հոդվածների սանկցիաների ստորին և վերին շեմերի միջև առկա է բավականաչափ մեծ խզում, ինչը, պատիժ նշանակելիս դատարանի ավելի լայն հայեցողություն է ենթադրում (օրինակ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 356-րդ հոդվածի (հրամանը չկատարելը) 3-րդ մասի սանկցիան սահմանում է. *«(...) պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասնհինգ տարի ժամկետով»,* ՀՀ քրեական օրենսգրքի 392-րդ հոդվածի (մարդկության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունները) սանկցիան սահմանում է. *«(...) պատժվում են ազատազրկմամբ՝ տասից քսան տարի ժամկետով»):* Կարծում ենք, որ սանկցիաների ստորին և վերին շեմերի միջև խզման նվազեցումը դատարանին հայեցողության ավելի սահմանափակ հնարավորություն կընձեռի՝ նպաստելով պատժի նշանակման չափանիշների հստակեցմանը:

Բացի այդ, դատարանի կողմից անարդարացի պատիժ նշանակելուն նպաստող պայմաններից է նաև այն, որ օրենսդիրը ՀՀ քրեական օրենսգրքի մի շարք հոդվածներում չի նախատեսել սանկցիաների ստորին շեմը՝ սահմանափակվելով բացառապես վերին շեմի սահմանմամբ (օրինակ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 113-րդ հոդվածի (դիտավորությամբ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը) 2-րդ մասով սահմանված է. *«(...) պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով»,* ՀՀ քրեական օրենսգրքի 358-րդ հոդվածի (պետի նկատմամբ բռնի գործողություններ կատարելը կամ դրանք կատարելու սպառնալիքը) 2-րդ մասով սահմանված է. *«(...) պատժվում է զինվորական ծառայության մեջ սահմանափակմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ կարգապահական գումարտակում պահելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով)»:* Հետևաբար, առաջարկում ենք Հատուկ մասի բոլոր հոդվածների սանկցիաներում պարտադիր կերպով սահմանել նաև ստորին շեմը, ինչը ևս կնպաստի պատժի նշանակման չափանիշների հստակեցմանը: Բացի այդ, հարկ է փաստել, որ այն հանցակազմերը, որոնց սանկցիաներում օրենսդիրը չի սահմանել ստորին շեմը, էապես տարբերվում են իրենց բնույթով, հանցագործության վտանգավորության աստիճանով, ինչպես նաև այն օբյեկտի արժեքով ու կարևորությամբ, որի դեմ ոտնձգում են: Պատժի անհատականացման սկզբունքի առավել արդյունավետ իրագործման նկատառումներով՝ առաջարկում ենք այս տեսակ հանցակազմերի համար

օրենսդրորեն տարբեր շեմեր նախատեսել՝ ելնելով դրանց բնույթից, վտանգավորության աստիճանից և այն հասարակական հարաբերությունների կարևորությունից, որի դեմ այդ արարքները ոտնձգում են:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը. Հետազոտության տեսական նշանակությունն առաջին հերթին կայանում է նրանում, որ հայրենական քրեական իրավունքում առաջին անգամ կատարվել է արդարության սկզբունքի իրագործման համատեքստում պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքային պահանջների կիրառման հիմնախնդիրների վեր հանման և դրանց լուծման ուղիների քննարկմանը նվիրված համալիր աշխատանք, որի արդյունքները կարող են տեսական հիմք հանդիսանալ հետագա գիտական հետազոտությունների համար: Բացի այդ ատենախոսության մեջ ներկայացված մոտեցումներն ու կատարված ուսումնասիրության արդյունքների վրա հիմնված առաջարկությունները կարող են օգտագործվել քրեական օրենսդրության կատարելագործման նպատակով: Ատենախոսության մեջ ներկայացված մոտեցումներն ու առաջարկությունները կարող են օգտագործվել նաև իրավակիրառ պրակտիկայում՝ պատժի նշանակման ընթացակարգի կատարելագործման նպատակով:

Հետազոտության արդյունքների փորձարկումը. Ատենախոսության թեման քննարկվել է Հայ-Ռուսական համալսարանի քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի ամբիոնում, որտեղ հաստատվել են ատենախոսության մեջ առկա հիմնական տեսական վերլուծություններն ու եզրակացությունները և աշխատանքը երաշխավորվել է հրապարակային պաշտպանության: Ատենախոսության մեջ կատարված վերլուծությունների արդյունքները արտացոլվել են հեղինակի կողմից հրապարակված գիտական հոդվածներում, որոնք լույս են տեսել հայրենական և օտարերկրյա գրախոսվող գիտական ամսագրերում:

Ատենախոսության կառուցվածքը. Ատենախոսությունը պատրաստված է ՀՀ Բարձրագույն որակավորման կոմիտեի կողմից ներկայացվող պահանջներին համապատասխան: Այն բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, որոնք ներառում են ութ պարագրաֆներ, եզրակացությունից, օգտագործված գրականության, իրավական ակտերի և պրակտիկայի նյութերի ցանկից և երկու հավելվածներից:

Ատենախոսության համառոտ բովանդակությունը

Ներածությունում հիմնավորվում է հետազոտության թեմայի արդիականությունը, ներկայացվում են մշակվածության աստիճանը, հետազոտության օբյեկտը և առարկան, նպատակը և խնդիրները, հետազոտության տեսական, իրավական, փորձառական հիմքերը, մեթոդաբանությունը, գիտական նորույթը, ձևակերպվում են պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, ներկայացվում են հետազոտության տեսական և գործնական նշանակությունն ու հետազոտության արդյունքների փորձարկումը:

Առաջին գլուխը՝ «Արդարությունը որպես փիլիսոփայական երևույթ և քրեական իրավունքի հիմնարար սկզբունք» վերտառությամբ, բաղկացած է երեք պարագրաֆներից:

Առաջին գլխի առաջին պարագրաֆում՝ «Արդարությունը որպես էթիկական-իրավական երևույթ (պատմաիրավական վերլուծություն)» վերտառությամբ, հեղինակը, հիմնվելով տեսական աղբյուրների վրա, վերլուծության է ենթարկել «արդարություն» հասկացությունը՝ բացահայտելով արդարության բարոյաիրավական հիմքը, ինչպես նաև արդարության՝ որպես իրավունքի հիմնարար սկզբունքի էությունն ու բովանդակությունը:

Առաջին գլխի երկրորդ պարագրաֆում՝ «Քրեական պատիժ նշանակելու ինստիտուտի ծագումն ու զարգացումը» վերտառությամբ, հեղինակը մանրամասն վերլուծության է ենթարկում պատժի նշանակման ինստիտուտի էությունը, զարգացումները, պատժի ինստիտուտի տեսական և գործնական հարցերը, ինչպես նաև ուսումնասիրում է ինչպես գործող քրեական օրենսդրության, այնպես էլ Նախագծով սահմանված պատժի համակարգը:

Առաջին գլխի երրորդ պարագրաֆում՝ «Արդարության սկզբունքի կիրառումը քրեական պատժի նշանակման ընդհանուր սկզբունքների համակարգում» վերտառությամբ, հեղինակը մանրամասն վերլուծության է ենթարկում արդարության սկզբունքի դերն ու նշանակությունը՝ պատժի նշանակման ընդհանուր սկզբունքների համատեքստում, ինչպես նաև վերլուծում է օրենսդրությամբ նախատեսված արդարացի պատժի նշանակման ընդհանուր սկզբունքային պահանջները:

Երկրորդ գլուխը՝ «Արդարացի պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքային պահանջները՝ ըստ ՀՀ քրեական օրենսգրքի» վերտառությամբ, բաղկացած է երեք պարագրաֆներից:

Երկրորդ գլխի առաջին պարագրաֆում՝ «Պատժի նշանակումը՝ կատարված հանցագործության հանրային վտանգավորության բնույթի և աստիճանի գնահատմամբ» վերտառությամբ, հեղինակը վերլուծության է ենթարկում պատիժ նշանակելու սկզբունքային պահանջներից մեկը՝ հանցագործության հանրային վտանգավորության բնույթի և աստիճանի գնահատումը՝ արդյունքում եզրահանգելով, որ պատիժ նշանակելիս և հանցագործության հանրային վտանգավորության աստիճանը որոշելիս դատարանները պետք է ելնեն այն բոլոր հանգամանքների համակցությունից, որոնցում կատարվել է կոնկրետ հանցավոր արարքը, մեղքի ձևից, հանցագործության կատարման շարժառիթներից, եղանակից,

իրադրությունից, հանցավոր մտադրության իրագործման աստիճանից, խախտված հասարակական հարաբերությունների բնույթից, առաջացած վնասի չափից:

Երկրորդ գլխի երկրորդ պարագրաֆում՝ «Պատժի նշանակումը՝ հանցավորի անձը բնութագրող տվյալների հաշվառմամբ» վերտառությամբ, հեղինակի կողմից քննարկման առարկա է դարձվում պատժի անհատականացման կարևորագույն միջոցներից անձը բնութագրող հանգամանքները՝ արդյունքում եզրահանգելով, որ պատիժ նշանակելիս խիստ անհատական մոտեցում ապահովելու նպատակով դատարանները պարտավոր են բազմակողմանիորեն, լրիվ և օբյեկտիվորեն հետազոտել ամբաստանյալի անձը բնութագրող տվյալները: Դատարանի կողմից որպես հանցավորի անձը բնութագրող հատկանիշներ պետք է գնահատվեն նրա կենսաբանական, սոցիալ-հոգեբանական, սոցիալ-ժողովրդագրական հատկությունները՝ վարքագիծն ընտանիքում և կենցաղում, աշխատանքի հանդեպ ունեցած վերաբերմունքը, կրթությունը, առողջական վիճակը, տարիքը, ծառայությունը պետության և հասարակության առջև, ինչպես նաև նրա կենսակերպը՝ մինչև հանցագործության կատարումը և վարքագիծը՝ այն կատարելուց հետո:

Երկրորդ գլխի երրորդ պարագրաֆում՝ «Պատժի նշանակումը՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքների գնահատմամբ» վերտառությամբ, հեղինակի կողմից վերլուծության է ենթարկվում օրենսդրությամբ նախատեսված արդարացի պատժի նշանակման ընդհանուր սկզբունքային պահանջներից պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքների գնահատումը: Հեղինակը վեր է հանում արդարացի պատժի նշանակումը կարգավորող նորմերի գործնական կիրառության ընթացքում առաջացող խնդիրները՝ տեսական գրականության և ձևավորված դատական պրակտիկայի ուսումնասիրության միջոցով: Նշված խնդրին անդրադառնում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից կայացված նախադեպային որոշումների լույսի ներքո:

Երրորդ գլուխը՝ «Պատժի նշանակման ինստիտուտի զարգացման հեռանկարը՝ արդարության սկզբունքի իրագործման համատեքստում (իրավահամեմատական վերլուծություն)» վերտառությամբ, բաղկացած է երկու պարագրաֆներից:

Երրորդ գլխի առաջին պարագրաֆում՝ «Պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքների իրավական կարգավորումները ըստ օտարերկրյա պետությունների քրեական օրենսդրությունների» վերտառությամբ, հեղինակը ուսումնասիրում է օտարերկրյա պետությունների քրեական օրենսդրություններով նախատեսված արդարացի պատիժ նշանակելու իրավական կարգավորումները՝ համեմատական վերլուծություն իրականացնելով Հայաստանի Հանրապետության և այլ պետությունների պատժի նշանակման ինստիտուտների միջև:

Երրորդ գլխի երկրորդ պարագրաֆում՝ «Պատիժ նշանակելու ինստիտուտի կատարելագործման ուղիները՝ միջազգային լավագույն փորձի հաշվառմամբ» վեր-տառությամբ, հեղինակը վեր հանելով պատժի նշանակման վերաբերյալ օտարերկրյա պետությունների լավագույն փորձը, ինչպես նաև համեմատահրավական վերլուծության ենթարկելով պատժի նշանակման վերաբերյալ գործող օրենսդրության և Նախագծի նորմերը, ներկայացրել է

առաջարկություններ՝ Նախագիծն առավել կատարելագործելու նկատառումներով և ակնկալիքով:

Ատենախոսության եզրակացություններում, ի լրումն պաշտպանության ներկայացվող դրույթների, կատարվել են հետևյալ հիմնական եզրահանգումներն ու առաջարկությունները:

1. Քրեական պատժի համակարգը հանդիսանում է այնպիսի միջոցների ամբողջություն, որոնք կիրառվում են հանցանք կատարած անձի նկատմամբ, և վերջինիս պատճառում են զրկանքներ՝ զրկելով նրան որոշակի բարիքներից ու իրավունքներից կամ սահմանափակում են այդպիսիք: Քրեական պատիժը հանցագործության ուղղակի արդյունքն է, հասարակության գնահատականը՝ հանցագործությամբ իր շահերին վնաս պատճառած անձին և նրա արարքին:

2. Դատարանի կողմից պատիժ սահմանելիս կիրառվում են հետևյալ ինստիտուցիոնալ սկզբունքները՝ պատժի օրինականությունը, օրենքի առջև բոլորի հավասարությունը, պատժի նշանակումը հանցագործության կատարման մեջ մեղավոր ճանաչված անձի նկատմամբ, պատժի արդարացիությունը, պատժի մարդասիրությունը (հումանիզմը), պատժի անխուսափելիությունը, պատժի անհատականացումը:

3. Արդարության էության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրա հասկացությունն արտացոլում է ողջ մարդկության բարձրագույն նպատակը և ակնհայտորեն հենց այդ պատճառով արդարության հիմնախնդիրը «ձգողական է» բոլոր ժամանակներում: Դարերի ընթացքում արդարության սկզբունքի իրագործումը համարվեց բարու դրսևորում: Արդարության մասին ամենաառաջին ուսմունքը ձևավորվել է Հին Հունաստանում, ընդ որում արդեն դեռևս այն ժամանակներում հույն մտածողները արդարության գաղափարը կապում էին օրինականության հետ՝ դրանով իսկ փորձելով հարցը փիլիսոփայական հարթությունից տեղափոխել իրավական դաշտ: Դարեր շարունակ, որպես արդարության հատկանիշներ են համարվել հավասարությունը, անկողմնակալությունը, բարյացակամությունը, պարկեշտությունը, հիմնավորվածությունը, համաչափությունը և հատուցումը:

4. ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված է, որ Հայաստանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է, մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է (3-րդ հոդված), ուստի գտնում ենք, որ ՀՀ քրեական օրենսգիրքն ընդհանրապես, և պատժի ինստիտուտը մասնավորապես, պետք է հիմնվեն ոչ միայն *«արարքի հայեցակարգի»* այլև *«անձի հայեցակարգի»* վրա, քանի որ օրենքը պատժում է ոչ թե հանցագործությունը, այլև հանցանք կատարած անձին: Հանցագործության այս կամ այն տեսակի համար պատիժ նախատեսելիս օրենսդիրը պետք է հիմնվի նաև կրիմինալոգիական իրողության վրա, որի կարևոր տարրերից մեկը հանցանք կատարողի անձն է: Ուսումնասիրությունները վկայում են, որ բազմաթիվ արտասահմանյան երկրների քրեական օրենսդրությունները հիմնված են «անձի հայեցակարգի» վրա, համաձայն որի՝ պատժվում է հանցանք կատարած անձը: Օրենսգիրքը, հիմնվելով արարքի հայեցակարգի վրա, շատ դեպքերում թույլ չի

տալիս ոչ միայն ապահովել արդարության սկզբունքի իրագործումը, այլև արդյունավետ քրեական քաղաքականություն իրականացնել:

5. Պատիժ նշանակելու հիմնարար սկզբունքներն ընդհանուր առմամբ այն ղեկավար դրույթներ են, որոնք ներդրվում են պատժի նշանակումը կարգավորող կանոնների մեջ, սահմանում են դատարանի կողմից նշանակվող պատժամիջոցների հիմքերը, պայմանները և կիրառման բնույթն ու չափը: Դատարանը յուրաքանչյուր քրեական գործով պատիժ նշանակելիս պարտավոր է ղեկավարվել պատժի նշանակման ընդհանուր սկզբունքային պահանջներով: Նշված սկզբունքներն ուրվագծում են դատարանի հայեցողության շրջանակները և կոչված են հնարավորինս բացառելու պատիժ նշանակելիս կամայականությունների դրսևորման հնարավորությունը:

6. Պատիժ նշանակելիս անհատական մոտեցում ապահովելու նպատակով դատարանները պարտավոր են բազմակողմանիորեն, լրիվ և օբյեկտիվորեն հետազոտել ամբաստանյալի անձը բնութագրող տվյալները: Դատարանի կողմից որպես հանցավորի անձը բնութագրող հատկանիշներ պետք է գնահատվեն նրա կենսաբանական, սոցիալ-հոգեբանական, սոցիալ-ժողովրդագրական հատկությունները՝ վարքագիծն ընտանիքում և կենցաղում, աշխատանքի հանդեպ ունեցած վերաբերմունքը, կրթությունը, առողջական վիճակը, տարիքը, ծառայությունը պետության և հասարակության առջև, ինչպես նաև նրա կենսակերպը՝ մինչև հանցագործության կատարումը և վարքագիծը՝ այն կատարելուց հետո:

7. Պատիժ նշանակելիս դատարանները պետք է ելնեն այն բոլոր հանգամանքների համակցությունից, որոնցում կատարվել է կոնկրետ հանցավոր արարքը, մեղքի ձևից, հանցագործության կատարման շարժառիթներից, եղանակից, իրադրությունից, հանցավոր մտադրության իրագործման աստիճանից, խախտված հասարակական հարաբերությունների բնույթից, առաջացած վնասի չափից:

8. Օտարերկրյա պետությունների քրեական օրենդրությունների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ տարբեր երկրների պատժի նշանակման ինստիտուտներում հիմնականում իրենց ամրագրումն ու արտացոլումն են ստացել արդարության, պատժի նշանակման անհատականացման, համաչափության և հումանիզմի սկզբունքները: Բացի այդ, մեծ ուշադրություն է գրավում նաև այն հանգամանքը, որ արտասահմանյան երկրների քրեական օրենսգրքերի մեծամասնությունը շեշտը դնում են պատժի մեղմացման վրա, հումանիզացիայի վրա, ազատազրկման այլընտրանք հանդիսացող պատժամիջոցների առավել լայն կիրառման անհրաժեշտության վրա, հատկապես երբ խոսքը գնում է անչափահաս տարիքում հանցանք կատարած անձի մասին:

9. Նախագծով առաջարկվել է պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքների ցանկից հանել հանցանք կատարելու պահին հանցավորի անչափահաս լինելը: Կարծում ենք, որ նշվածի կապակցությամբ գործող օրենսգրքի դրույթն առավել ընդունելի է, քանի որ քրեական օրենսդրությունը հատուկ վերաբերմունք է ամրագրել անչափահասների նկատմամբ. օրենսգրքով նախատեսված են նորմեր (ՀՀ քրեական օրենսգրքի բաժին 5, գլուխ 14), որոնք առաջացնում են համեմատաբար բարենպաստ վիճակ հանցանք կատարած

անչափահասների համար՝ հաշվի առնելով, որ վերջիններս, ելնելով տարիքային առանձնահատկություններից, չեն կարող լիովին պատկերացնել կատարված հանցանքի վտանգավորությունն ու ճիշտ կողմնորոշվել կոնկրետ իրադրությունում: Հաճախ նրանք գտնվում են կա՛մ չափահաս հանցագործի ազդեցության տակ և չեն կարողանում դրանից խուսափել, կա՛մ նրանց կողմից հանցանքի կատարմանը նպաստում են ծանր ընտանեկան և/կամ սոցիալական պայմանները: Դատարանները, պատիժ կամ քրեաիրավական ներգործության այլ միջոց նշանակելիս, ղեկավարվում են երկու խումբ սկզբունքներով՝ պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքերով, որոնք հավասարապես կիրառելի են թե՛ չափահասների, թե՛ անչափահասների նկատմամբ, և անչափահասների նկատմամբ կիրառվող հատուկ սկզբունքներով, որոնց ձևավորումը պայմանավորված է անչափահասների տարիքային, սոցիալական, ֆիզիոլոգիական ու հոգեբանական առանձնահատկություններով:

Բացի այդ, անչափահասների նկատմամբ հատուկ սկզբունքներ և մոտեցումներ կիրառելու անհրաժեշտությունը, ի թիվս այլոց, սահմանված է նաև Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի հանձնարարականում, Անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելու վերաբերյալ ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոններում (Պեկինյան կանոններ), ինչպես նաև բազմաթիվ արտասահմանյան երկրների քրեական օրենսդրություններում: Հետևաբար կարծում ենք, որ հանցանք կատարելու պահին հանցավորի անչափահաս լինելը պետք է օրենսդրորեն ամրագրվի որպես պատիժն ու պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք, ուստի քրեական օրենսգրքի գործող իրավակարգավորումն առավել ընդունելի է:

Ատենախոսության Հավելված 1-ում ներկայացված է արդարության սկզբունքի իրագործման համատեքստում պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքների վերաբերյալ տեսակետներն ուսումնասիրելու նպատակով մեր կողմից հարցում իրականացնելու համար կազմված հարցաթերթիկը, իսկ **Հավելված 2-ում՝** կատարված հարցման արդյունքները:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքները արդարության սկզբունքի իրագործման համատեքստում, «Դատական իշխանություն» գիտամեթոդական ամսագիր, թիվ 9-10 (231-232), Երևան, 2018, էջեր 67-75:
2. Արդարության՝ որպես էթիկական-իրավական երևույթի և արդարության սկզբունքի կիրառումը քրեական պատժի համակարգում, «Դատական իշխանություն» գիտամեթոդական ամսագիր, թիվ 11-12 (233-234), Երևան, 2018, էջեր 12-19:
3. Հանցագործության հանրային վտանգավորության աստիճանի և բնույթի գնահատումը որպես պատժի արդարացիության ապահովման երաշխիք, «Դատական իշխանություն» գիտամեթոդական ամսագիր, թիվ 5-6 (239-240), Երևան, 2019, էջեր 42-50:
4. Հանցավորի անձը բնութագրող տվյալների գնահատումը որպես արդարացի պատիժ նշանակելու սկզբունքային պահանջ, «Դատական իշխանություն» գիտամեթոդական ամսագիր, թիվ 7-8 (241-242), Երևան, 2019, էջեր 35-43:
5. Պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքները որպես պատժի անհատականացման կարևորագույն միջոց, «Դատական իշխանություն» գիտամեթոդական ամսագիր, թիվ 9-10 (243-244), Երևան, 2019, էջեր 29-41:
6. Պատժի նշանակման ինստիտուտի զարգացման հեռանկարը՝ արդարության և մարդասիրության սկզբունքների իրագործման համատեքստում, «Դատական իշխանություն» գիտամեթոդական ամսագիր, թիվ 3-4 (249-250), Երևան, 2020, էջեր 41-48:
7. Պատժի համակարգի ինստիտուտի կատարելագործման միտումները՝ ըստ ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծի (համեմատական վերլուծություն), «Դատական իշխանություն» գիտամեթոդական ամսագիր, թիվ 5-6 (251-252), Երևան, 2020, էջեր 45-56:
8. Պատժի նշանակման ընդհանուր սկզբունքների կիրառման հիմնախնդիրները և կատարելագործման ուղիները, «Պետություն և իրավունք», թիվ 2 (87), Երևան, 2020, էջեր 64-74:
9. Правовые нормы института наказания по уголовному законодательству зарубежных стран, «The scientific heritage», № 48, Vol. 5, Budapest, Hungary, 2020, էջեր 58-62:
10. Понятие и характеристика общих начал назначения наказанияв контексте реализации принципа справедливости, «Scientific discussion», № 44, Vol. 1, Praha, Czech Republic, 2020, էջեր 24-29:

АБРААМЯН ЭМИЛЯ АШОТОВНА

ОБЩИЕ НАЧАЛА НАЗНАЧЕНИЯ НАКАЗАНИЯ В КОНТЕКСТЕ РЕАЛИЗАЦИИ ПРИНЦИПА СПРАВЕДЛИВОСТИ ПО УГОЛОВНОМУ ЗАКОНОДАТЕЛЬСТВУ РА

РЕЗЮМЕ

Актуальность темы исследования заключается в том, что на современном этапе развития общества уголовное наказание является необходимым и в то же время эффективным средством реагиривания государства на совершенное преступление. Следовательно, институт наказания, а также принципы его назначения постоянно нуждаются как в тщательной регламентации, так и в научном обосновании с тем, чтобы меры уголовно-правового воздействия применялисъ лишь в тех рамках, в каких они необходимы и достаточны для достижения целей и задач наказания.

Целью исследования является системное изучение и анализ института о назначение наказания в контексте реализации принципа справедливости, а также выявление путем количественного и качественного анализа основных проблем законодательного регулирования назначения наказания и основных закономерностей политики вынесения приговоров, применяемой судами Республики Армения, проведение сравнительного анализа между системами наказаний Республики Армения и ряда других государств, как и разработка рекомендаций, направленных на совершенствование законодательства и правоприменительной практики на основе результатов комплексного исследования.

Для достижения вышеуказанной цели нами были выдвинуты следующие задачи: выявить сущность и содержание справедливости как основополагающего принципа права, проанализировать предусмотренные законом общие принципиальные требования к назначению справедливого наказания, то есть при назначении наказания необходимость оценки характера и степени общественной опасности совершенного преступления, оценки данных характеризующих личность виновного, как и обстоятельства смягчающих или отягчающих ответственность наказание, а также путем изучения сформировавшейся судебной практики и юридической литературы изучить и выявить проблемы, возникающие при применении нормы принципа справедливости наказания, исследовать законодательные регулирования назначения справедливого наказания, предусмотренные уголовными законодательствами зарубежных стран, подвергнуть сравнительно – правовому анализу нормы действующего законодательства и проекта нового Уголовного кодекса РА касательно назначения наказания, представить рекомендации с целью дальнейшего совершенствования законодательства, и на основе результатов проведенных исследований разработать и представить соответствующие предложения.

Правовую и эмпирическую базу исследования составили: Конституция РА,

Уголовный кодекс РА, Уголовно-процессуальный кодекс РА, Уголовное законодательство зарубежных стран, Всеобщая декларация прав человека, Европейская конвенция о защите прав человека и основных свобод, Международный пакт о гражданских и политических правах, Конвенция против пыток и других жестоких, бесчеловечных или унижающих достоинство видов обращения и наказания, Рекомендация CM / Rec (2008) 11 Комитета министров Совета Европы, а также прецедентные решения Европейского суда по правам человека и Кассационного суда Республики Армения относительно общих правил назначения наказания, а также статистические данные по приговорам вынесенным судами Республики Армения.

Впервые на уровне диссертационного исследования в Республике Армения была предпринята попытка комплексного и всестороннего исследования и анализа теоретических и практических вопросов реализации принципа справедливости при назначении наказания.

Вышеуказанный анализ был проведен на основе системного изучения Уголовного кодекса РА, проекта нового Уголовного кодекса РА, уголовных законодательств ряда зарубежных стран, правовых источников, правовых позиций Европейского суда по правам человека, прецедентных решений Кассационного суда РА, а также соответствующих международных документов. В результате исследования и выявления проблем, возникающих при практическом применении норм, регулирующих процесс вынесения приговора, по данному вопросу были представлены теоретические выводы и законодательные предложения. Научная новизна диссертации отражена также в выносимых на защиту положениях.

Тема диссертационного исследования обсуждалась на кафедре уголовного права и уголовно-процессуального права Российско-Армянского университета, где были подтверждены основные теоретические положения и выводы диссертации. Результаты проведенных исследований нашли отражение в научных статьях автора, опубликованных в отечественных и зарубежных рецензируемых научных журналах.

EMILYA ASHOT ABRAHAMYAN

GENERAL PRINCIPLES OF ASSIGNING PUNISHMENT IN THE CONTEXT OF IMPLEMENTATION OF THE PRINCIPLE OF JUSTICE ACCORDING TO CRIMINAL LEGISLATION OF RA

SUMMARY

The novelty of the topic of the dissertation lies in the fact that at the present stage of development of society, criminal punishment is an effective means of the state's response to a crime committed. Therefore, the institution of punishment, as well as the principles of its appointment, always need to be thoroughly regulated, as well as scientifically substantiated, so that criminal measures are applied only to the extent necessary to achieve the goals and objectives of punishment.

The purpose of the research is to systematically study and analyze the issue of assigning punishment in the context of implementation of the principle of justice, to identify the main regularities of the assigning punishment policy implemented by the courts in the Republic of Armenia and to raise the issues of legislative regulation of sentencing through quantitative and qualitative analyses, to carry out a comparative analysis between the punishment systems of the Republic of Armenia and other states, as well as to develop recommendations for the improvement of legislation and law enforcement practice based on the results of a comprehensive survey.

In order to achieve the above-mentioned goal, we have put forward the following tasks: to identify the essence and content of justice as a fundamental principle of law, to analyze the general principle requirements for the just sentencing provided by law, that is, to assess the nature and degree of public danger of the crime, the data characterizing the perpetrator, mitigating and aggravating circumstances of responsibility and punishment at the time of sentencing, as well as to study and identify issues arising during the practical application of the norms regulating the imposition of a fair punishment through the study of theoretical literature and case law, to study the legal regulations for the imposition of a fair punishment under the criminal laws of foreign countries, to make a comparative legal analysis of the norms on sentencing of current legislation and the draft of the RA Criminal Code, to submit proposals with a view to further improving the legislation, to develop and submit relevant legislative proposals based on the results of the conducted research.

The legal and empirical basis of the research was include Constitution of RA, Criminal Code of RA, Criminal Procedure Code of RA, criminal legislation of foreign countries, Universal Declaration of Human Rights, European Convention for the Protection of Human Rights and Fundamental Freedoms, International Covenant on Civil and Political Rights, Convention against Torture and Other Cruel, Inhuman or Degrading Treatment or Punishment, Recommendation CM/Rec(2008)11 of the Committee of Ministers of the Council of Europe, as well as the case-law of the European Court of Human Rights and the Court of Cassation of the Republic of Armenia on the general principle requirements

for the sentencing and the statistics on the sentences imposed by the courts of the Republic of Armenia.

For the first time in the Republic of Armenia, at the level of a dissertation, an attempt was made to comprehensively study and analyze the theoretical and practical issues of applying the general principles of assigning punishment in the context of implementation of the principle of justice.

The mentioned analysis was made on the basis of a systematic study of the RA Criminal Code and the draft of the RA Criminal Code, criminal legislation of certain foreign countries, theoretical sources, legal views of the European Court of Human Rights, precedential decisions of the Court of Cassation of RA, as well as relevant international documents. Examining, raising the issues that arise during the practical application of the norms regulating the sentencing process, as a result, theoretical conclusions and legislative proposals were presented in this regard. The scientific novelty of the dissertation is also reflected in the main standpoints of the study.

The topic of dissertation, the main theoretical analyses and conclusions were confirmed by the Chair of Criminal Law and Criminal Procedure Law of the Russian-Armenian University. The fundamental standpoints of the thesis were reflected in the scientific articles of the author published in domestic and foreign peer-reviewed scientific journals.